CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՆՁՆԱԳՐԻ (070 ԿՈԴՈՎ) ԿՈՐՍՏՅԱՆ, ԴՐԱ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՁՆԱԳՐԻ

ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆ 2024

CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՆՁՆԱԳՐԻ (070 ԿՈԴՈՎ) ԿՈՐՍՏՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՁՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....3

ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՆՁՆԱԳՐԻ (070 ԿՈԴՈՎ) ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՁՆԱԳՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....8

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՆՁՆԱԳՐԻ (070 ԿՈԴՈՎ) ԿՈՐՍՏՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՁՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եթե ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող անձ եք և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման արդյունքում (դրանից հետո) կորցրել եք Ձեր անձնագիրը **(070 կոդով)**, ապա կորցրած անձնագրի վերականգնումը **(070 կոդով)** կարող եք իրականացնել ՀՀ Կառավարության՝ 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ սահմանված կարգով։

Քայլ 1. Անձնագիրը կորցրած անձն այդ մասին պետք է հայտնի լիազոր մարմին, այն է՝ **ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության**, իսկ ՀՀ-ից դուրս գտնվելու դեպքում՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ։

Քայլ 2. Անձնագրի կորստյան դեպքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

(1) դիմում՝ անձնագիր ստանալու մասին,

(2) պետական տուրքի վճարման անդորրագիրը: Վճարման հղումը՝ Պետական վճարումների էլեկտրոնային համակարգ (e-payments.am)

Անձնագրի կորստյան դեպքում դրա վերականգնման դիմաց գանձվող պետական տուրքը կազմում է 1000 ՀՀ դրամ:

Քայլ 3. Անձնագրի կորստյան դեպքում Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձին՝ <u>իր ցանկությամբ,</u> մինչև նոր անձնագրի տրամադրումը տրվում է ժամանակավոր վկայական:

Ժամանակավոր վկայական կարող է տրամադրվել նաև այն դեպքում, երբ քաղաքացին անձնագիրը կորցնելու մասին հայտնել է լիազոր մարմնին, սակայն չի ցանկացել ստանալ նոր անձնագիր:

Կալանավորված կամ ազատազրկման դատապարտված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձը ժամանակավոր վկայականը ստանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի վարչակազմի, իսկ հոգեբուժական հիվանդանոցում կամ հոգեբուժական օգնություն տրամադրող այլ հաստատությունում ստացիոնար բուժման մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձը՝ նշված հաստատությունների վարչակազմի միջոցով: Կարճաժամկետ մեկնում ստա-

ցած դատապարտյալը ժամանակավոր վկայականը ստանում է ընդհանուր հիմունքներով:

Ժամանակավոր վկայական ստանալու համար Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձն **անձամբ** լիազոր մարմին է ներկայացնում դիմում և 35 x 45 մմ չափսի երկու գունավոր լուսանկար:

Խնամակալի կամ ներկայացուցչի միջոցով ժամանակավոր վկայական ստանալու համար դիմումին կցվում են.

- խնամակալի կամ ներկայացուցչի անձնագրի և խնամակալի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթղթի պատճենները,

իսկ

- «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7.1-ին կետով նախատեսված դեպքերում[1] ներկայացուցչի լիազորությունները

[1] Առողջական վիճակի բերումով ժամանակավորապես անգիտակից վիճակում գտնվող կամ շարժվելու և (կամ) կոգնիտիվ ունակությունը ժամանակավորապես կամ մշտական կորցրած անձանց անձնագիր տրամադրվում է մերձավոր ազգականների (հայր, մայր, ամուսին, զավակ, քույր, եղբայր, տատ, պապ) դիմումի կամ ստացիոնար բուժման մեջ գտնվելու դեպքում՝ բժշկական հաստատության ղեկավարի գրության հիման վրա: Սույն մասով նախատեսված դեպքում մերձավոր ազգականի ներկայացրած դիմումին կցվում են ազգակցական կապը հաստատող փաստաթղթերը և անձի առողջական վիճակի վերաբերյալ բժշկական հաստատության տված փաստաթուղթը՝ անգիտակից վիճակի կամ անձի կողմից ինքնուրույն գործողություն կատարելու անհնարինության կամ անձի հիվանդության հետևանքով առաջացած սահմանափակումների վերաբերյալ համապատասխան նշումով:

հաստատող փաստաթղթի փոխարեն հիմք են ընդունվում ազգակցական կապը հաստատող փաստաթղթերը և անձի առողջական վիճակի վերաբերյալ բժշկական հաստատության տված՝ անգիտակից վիճակի կամ անձի կողմից ինքնուրույն գործողություն կատարելու անհնարինության կամ անձի հիվանդության հետևանքով առաջացած սահմանափակում-ների վերաբերյալ համապատասխան նշումով փաստաթուղթը: Կարճաժամկետ մեկնում ստացած դատապարտյալները ժամանակավոր վկայական ստանալու համար ներկայացնում են նաև քրեակատարողական հիմնարկի կողմից տրված կարճաժամկետ մեկնման թույլտվության վկայականը և դրա պատճենը:

Վկայականի բնօրինակը պատճենի հետ համեմատելուց հետո վերադարձվում է:

Ժամանակավոր վկայականը տրամադրվում է վերոնշյալ փաստաթղթերը ներկայացվելուց հետո անմիջապես, մինչև նոր անձնագիրն ստանալու համար նախատեսված ժամկետով, իսկ կորցրած անձնագրի փոխարեն նոր անձնագիր ստանալու դիմում չներկայացնելու դեպքում՝ 15 օր վավերականության ժամկետով:

Կորցրած անձնագրի փոխարեն նոր անձնագիրը տրվում է լիազոր մարմնում քաղաքացու դիմումի մուտքագրումից հետո՝ 10-րդ աշխատանքային օրը: Սակայն լիազոր մարմինը ծառայությունների վճարովի մատուց-ման պայմանագրի հիման վրա անձնագիր կարող է տալ ավելի կարճ ժամկետում՝

Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2008 թվականի դեկտեմբերի 11-ի N 1465-Ն որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով։

Ըստ որի՝

(1) **1 աշխատանքային օրվա ընթացքում** ստանալու համար գանձվող պետական տուրքը կազմում է 60.000 ՀՀ դրամ,

(2) **3-րդ աշխատանքային օրը** ստանալու համար գանձվող պետական տուրքը կազմում է 50.000 ՀՀ դրամ,

(3) **5-րդ աշխատանքային օրը** ստանալու համար պետական տուրքը կազմում է 40.000 ՀՀ դրամ։

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՆՁՆԱԳՐԻ (070 ԿՈԴՈՎ) ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՁՆԱԳՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եթե ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող անձ եք, և Ձեր անձնագրի **(070 կոդով)** վավերականության ժամկետը լրացել է, ապա կարող եք փոխանակել վավերականության ժամկետը լրացած անձնագիրը նորով՝ ՀՀ Կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Քայլ 1. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականն անձը հաստատող փաստաթղթերը փոխանակելու համար ՀՀ բնակչության պետական ռեգիստրում հաշվառում ունենալու դեպքում պետք է դիմի՝ ՀՀ **ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության**, իսկ օտարերկրյա պետություններում՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ կամ հյուպատոսական հիմնարկներ:

Քայլ 2. Անձնագիրը փոխանակելու համար անձը ներկայացնում է՝

(1) դիմում.

(2) փոխանակման ենթակա անձնագիր.

(3) 35 x 45 մմ չափսի երկու լուսանկար (գունավոր).

(4) փաստաթղթում որևէ տեղեկություն փոխելու կամ գրառումներում անճշտություններ հայտնաբերելու դեպքում՝ նաև իրավասու մարմնի կողմից տրված փոփոխությունը կամ անճշտությունը հավաստող փաստաթուղթ, եթե այդ տեղեկություններն առկա չեն ծառայության վարվող շտեմարանում:

Վավերականության ժամկետը լրանալու դեպքում անձնագրի փոխանակման դիմաց գանձվող պետական տուրքը կազմում է 1000 ՀՀ դրամ:

Քայլ 3. Վավերականության ժամկետը լրացած անձնագիրը փոխանակման ներկայացնելիս Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձին իր ցանկությամբ մինչև նոր անձնագրի տրամադրումը տրվում է *ժամանակավոր վկայական:*

Կալանավորված կամ ազատազրկման դատապարտված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձը ժամանակավոր վկայականը ստանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի վարչակազմի, իսկ հոգեբուժական հիվանդանոցում կամ հոգեբուժական օգնություն տրամադրող այլ հաստատությունում ստացիոնար բուժման

մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձը՝ նշված հաստատություն-ների վարչակազմի միջոցով: Կարճաժամկետ մեկնում ստացած դատապարտյալը ժամանա-կավոր վկայականը ստանում է ընդհանուր հիմունքներով:

Ժամանակավոր վկայական ստանալու համար Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձն **անձամբ** լիազոր մարմին է ներկայացնում դիմում և 35 x 45 մմ չափսի երկու գունավոր լուսանկար:

Խնամակալի կամ ներկայացուցչի միջոցով ժամանակավոր վկայական ստանալու համար դիմումին կցվում են.

- խնամակալի կամ ներկայացուցչի անձնագրի և խնամակալի կամ ներկայացուցչի լիազորու-թյունները հաստատող փաստաթղթի պատճեն-ները,

իսկ

- «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7.1-ին կետով նախատեսված դեպքերում[2] ներկայացուցչի լիազորությունները

[2] Առողջական վիճակի բերումով ժամանակավորապես անգիտակից վիճակում գտնվող կամ շարժվելու և (կամ) կոգնիտիվ ունակությունը ժամանակավորապես կամ մշտական կորցրած անձանց անձնագիր տրամադրվում է մերձավոր ազգականների (հայր, մայր, ամուսին, զավակ, քույր, եղբայր, տատ, պապ) դիմումի կամ ստացիոնար բուժման մեջ գտնվելու դեպքում՝ բժշկական հաստատության ղեկավարի գրության հիման վրա: Սույն դեպքում մերձավոր ազգականի ներկայացրած դիմումին կցվում են ազգակցական կապը հաստատող փաստաթղթերը և անձի առողջական վիճակի վերաբերյալ

հաստատող փաստաթղթի փոխարեն հիմք են ընդունվում ազգակցական կապը հաստատող փաստաթղթերը և անձի առողջական վիճակի վերաբերյալ բժշկական հաստատության տված՝ անգիտակից վիճակի կամ անձի կողմից ինքնուրույն գործողություն կատարելու անհնարինության կամ անձի հիվանդության հետևանքով առաջացած սահմանափակումների վերաբերյալ համապատասխան նշումով փաստաթուղթը: Կարճաժամկետ մեկնում ստացած դատապարտյալները ժամանակավոր վկայական ստանալու համար ներկայացնում են նաև քրեակատարողական հիմնարկի կողմից տրված կարճաժամկետ մեկնման թույլտվության վկայականը և դրա պատճենը:

Վկայականի բնօրինակը պատճենի հետ համեմատելուց հետո վերադարձվում է քաղաքացուն:

Ժամանակավոր վկայականը տրամադրվում է վերոնշյալ փաստաթղթերը ներկայացվելուց հետո անմիջապես, մինչև նոր անձնագիրն ստանալու համար նախատեսված ժամկետով, իսկ կորցրած անձնագրի փոխարեն նոր անձնագիր ստանալու դիմում չներկայացնելու դեպքում՝ 15 օր վավերականության ժամկետով:

բժշկական հաստատության տված փաստաթուղթը՝ անգիտակից վիճակի կամ անձի կողմից ինքնուրույն գործողություն կատարելու անհնարինության կամ անձի հիվանդության հետևանքով առաջացած սահմանափակումների վերաբերյալ համապատասխան նշումով:

Ծառայությունն անձնագիրը փոխանակում է դիմումը մուտքագրվելուց հետո 5-րդ աշխատանքային օրը: Սակայն լիազոր մարմինը ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա անձնագիրը կարող է փոխանակել ավելի կարճ ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2008 թվականի դեկտեմբերի 11-ի N 1465-Ն որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով: Մասնավորապես՝

(1) **1 աշխատանքային օրվա ընթացքում** ստանալու համար գանձվող պետական տուրքը կազմում է 20.000 ՀՀ դրամ,

(2) 3-րդ աշխատանքային օրը ստանալու համար գանձվող պետական տուրքը կազմում է 10.000 ՀՀ դրամ:

Անձնագիրը դիմումատուին հանձնվում է ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականի հետ միասին: